«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«22» Դեկտեմբեր 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

N ՍՑ-ԳԲԽ-11/13 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.10.2012թ. N 1.1/13.1/13629-12 գրությամբ ներկայացված «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ 00015668) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.10.2012թ. N 1.1/13.1/13629-12 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար՝ կից ներկայացնելով «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի (այսուհետ նաև՝

Պատվիրատու) 26.09.2012թ. ԴԴ-1-Ե-4379 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 26.10.2012թ. N 09/032-970 և 21.08.2013թ. N 09/032-1151 գրություններով դիմել է «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

«Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-11/13 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը հանձնաժողովի նիստին:

3. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 26.10.2012թ. N 07/032-971 և 21.08.2013թ. N 04/032-1152 գրություններով դիմել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ և Կենտրոնին տրամադրել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 29.08.2013թ. ԴԴ-3-Ե-4281 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ի միջև 05.03.2012թ. կնքվել է ՀՀ դատական կարգադրիչների ծառայությանն անհրաժեշտ տարբեր տեսակի հանդերձանքի ձեռքբերման ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-2 պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի ընդհանուր արժեքը կազմել է 13121949 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով Ընկերության ստանձնած պայմանագրային պարտավորության ոչ պատշաճ կատարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.3 և 7.2 կետերը՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն միակողմանի լուծել է «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ի հետ 05.03.2012թ. կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-2 պայմանագիրը:

Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերն օրենքով սահմանված կարգով տրամադրվել է համապատասխան գերատեսչություններին՝ լիազոր մարմնին և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ չի առարկում, որպեսզի անբարեխիղճ մասնակիցների նկատմամբ կիրառվեն օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պատվիրատուն 04.10.2013թ. ԴԴ-1-Ե-5032 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 05.09.2013թ. ԴԴ-1-4459 գրությամբ «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին տեղեկացրել է հաշվարկված, հաշվանցված, ինչպես նաև ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա տույժերի մասին՝ կից ներկայացնելով վերոհիշյալ գրությունն Ընկերության կողմից 07.09.2013թ. ստանալու հանգամանքը հավաստող ծանուցագրի պատճենը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-11/13 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը հանձնաժողովի նիստին:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-11/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 19.10.2012թ. N 1.1/13.1/13629-12 գրությամբ «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ի միջև 05.03.2012թ. կնքվել է տարբեր տեսակի հանդերձանքի ձեռքբերման ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-2 պայմանագիր:

2. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնով նախատեսված 1616 հատ վերնաշապիկ երկարաթև՝ 5171846 ՀՀ դրամ արժեքով և 2-րդ չափաբաժնով նախատեսված 1616 հատ վերնաշապիկ կարճաթև՝ 4685753 ՀՀ դրամ արժեքով, գնման ենթակա ապրանքի

վերնաշապիկ կարճաթև՝ 4685753 ՀՀ դրամ արժեքով, գնման ենթակա ապրանքի ողջ խմբաքանակը՝ 9857600 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, սահմանվել է ձեռք բերել 2-րդ եռամսյակում՝ մինչև 30.06.2012թ.:

3. 11.04.2012թ. դրությամբ «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ն Պայմանագրի N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնով նախատեսված 1616 հատ ապրանքից՝ վերնաշապիկ երկարաթև, մատակարարել է 500 միավոր, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված 1616 հատ ապրանքից՝ վերնաշապիկ կարճաթև՝ 400 միավոր:

4. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 27.08.2012թ. ԴԴ-1-Ե-3922 գրությամբ «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին առաջարկել է 2-րդ եռամսյակում սահմանված ապրանքների ողջ խմբաքանակը մատակարարել մինչև 2012թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում, միաժամանակ հայտնելով, որ հակառակ դեպքում Պատվիրատուն պարտավորված կլինի կիրառել պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5. Ի պատասխան «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 27.08.2012թ. ԴԴ-1-Ե-3922 գրության՝ «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ն 28.08.2012թ. ՍԲ-111 գրությամբ Պատվիրատուին խնդրել է հնարավորություն տալ Պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված 2-րդ եռամսյակի չկատարված պարտավորությունները կատարել մինչև 2012թ. սեպտեմբերի 30-ը:

6. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն 03.09.2012թ. N ԴԴ-1-Ե4050 գրությամբ սահմանելով մատակարարման համար նոր ժամկետ, Ընկերությանն առաջարկել է 2-րդ եռամսյակում նախատեսված ապրանքների ողջ խմբաքանակը մատակարարել մինչև 2012թ. սեպտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածը, միաժամանակ տեղեկացնելով, որ այլապես Պատվիրատուն պարտավորված կլինի կիրառել պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

7. Ընկերությունը Պատվիրատուին հասցեագրված 10.09.2012թ. 4-376 գրությամբ խնդրել է մատակարարման ժամկետն երակարաձգել մինչև 2012թ. սեպտեմբերի 30-ը:

8. Պատվիրատուն, հիմք ընդունելով «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ի միջև 05.03.2012թ. կնքված ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-2

պայմանագրի 3.1.1, 3.1.7 կետերը և 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, Ընկերությանն ուղղված 12.09.2012թ. ԴԴ-1-Ե-4190 գրությամբ Պայմանագիրը միակողմանի լուծել է:

9. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն Ընկերությանը հասցեագրված 05.09.2013թ. ԴԴ-1-Ե-4459 գրությամբ հայտնել է, որ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման հետևանքով «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ի նկատմամբ հաշվարկվել է տույժ՝ 259061 ՀՀ դրամ ու տուգանք՝ 1312194 ՀՀ դրամ և առաջարկել է 5 բանկային օրվա ընթացքում վճարել նշված գումարները, սակայն Ընկերության կողմից այդ գումարները չեն վճարվել:

10. ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական կառավարման մարմիններին, Երևանի քաղաքապետարանին ուղղված 16.07.2013թ. թիվ 1/13.1/10103-13 շրջաբերականով ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտումներ թույլ տված մասնակիցների ցանկը (այդ թվում նաև «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին) և խնդրել խախտման ժամկետից հետո մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացրած մասնակիցների մասին տեղեկատվությունը տրամադրել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

11. Ի կատարումն ՀՀ ֆինանսների նախարարի 16.07.2013թ. թիվ 1/13.1/10103-13 գրության՝ ՀՀ ոստիկանությունը 09.08.2013թ. N 11/1475 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ն մասնակցելու համար հայտ է ներկայացրել ՀՀ ոստիկանության կողմից 12.11.2012թ. և 25.12.2012թ. կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/10» և «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/10/13» ծածկագրերով գնման ընթացակարգերին:

5. ՍՑ-ԳԲԽ-11/13 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» այդ պահին գործող կարգի 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն իրավունք ունի միակողմանի լուծել նույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է նույն Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բազմիցս խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

Այսպիսով, «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ն Պայմանագրի N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված 1616 հատ՝ «Վերնաշապիկ երկարաթև» և «Վերնաշապիկ կարճաթև» գնման ենթակա ապրանքի ողջ խմբաքանակը՝ 9857600 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, պետք է մատակարարեր 2-րդ եռամսյակում՝ մինչև 30.06.2012թ., սակայն վերոհիշյալ չափաբաժիններով նախատեսված 1616 հատ ապրանքից 11.04.2012թ. դրությամբ մատակարարել է 500 հատ «Վերնաշապիկ երկարաթև» 1600200 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և 400 հատ «Վերնաշապիկ կարճաթև» 1159840 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, ընդամենը՝ 2760040 ՀՀ դրամ արժեքով ապրանք: Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետն ավարտվելուց հետո Պատվիրատուի կողմից սահմանված նոր ժամկետներում՝ մինչև 2012թ. օգոստոսի 31-ը և 2012թ. սեպտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածներում, Ընկերության կողմից չմատակարարված ապրանքները դարձյալ չեն մատակարարվել: Այսինքն՝ Ընկերությունը, խախտելով Պայմանագրով ստանձնած պարտավորությունը, Պատվիրատուին մատակարարել է Պայմանագրով նախատեսված քանակից պակաս ապրանք, ինչպես նաև բազմիցս խախտել է ապրանքի մատակարարման ժամկետները:

Նկատի ունենալով, որ Ընկերությունը 12.09.2012թ. խախտում թույլ տալուց հետո հայտ է ներկայացրել 12.11.2012թ. և 25.12.2012թ. կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/10» և «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԱՊՁԲ-11/10/13» ծածկագրերով գնման ընթացակարգերին մասնակցելու համար, և հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի հետ 05.03.2012թ. կնքված տարբեր տեսակի հանդերձանքի ձեռքբերման ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/10-2 պայմանագրով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը և դրա հետևանքով հաշվարկված տույժը և տուգանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելն Ընկերության կողմից չեն վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 19.10.2012թ. N 1.1/13.1/13629-12 գրությամբ «Կոնտինենտտեքս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը (ՀՎՀՀ 00015668) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-11/13 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան